



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԱԶՆՎԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
2013-2016ԹԹ. ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ
2013 – 2016ԹԹ.

Կազմեց համայնքի ղեկավար

Նարեկ Հովսեփյանը

Հաստատված է 21.02.2013թ.
Ազնվաձոր համայնքի ավագանու
թիվ 2 – Ն որոշմամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|------------------------------------------------------------------------------------|----|
| Ազնվածորհամայնքի 2013 – 2016 թթ. քառամյա ծրագիր..... | 2 |
| 1. Համայնքի իրավիճակի գնահատում..... | 2 |
| 2. Ժողովրդագրություն..... | 2 |
| 3. Համայնքի զարգացման գերակա ուղղությունները..... | 2 |
| Տիմ..... | 3 |
| Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը..... | 4 |
| Համայնքի ուժեղ կողմերը..... | 4 |
| Համայնքի թույլ կողմերը..... | 4 |
| Համայնքի հիմնական վտանգ սպառնացող գործոնները..... | 5 |
| Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները..... | 5 |
| Համայնքի հեռանկարային նպատակների առաջադրում և առաջնահերթ խնդիրների ձևակերպում..... | 6 |
| Ծրագիր 1. Համայնքի գազաֆիկացում..... | 6 |
| Ծրագիր 2. Ջրամատակարարում, ջրագծի ներքին ցանցի կառուցում..... | 6 |
| Ծրագիր 3. Ճանապարհների բարեկարգում, ասֆալտապատում..... | 7 |
| Ծրագիր 4. Բուժկետի կառուցում..... | 7 |
| Ծրագիր 5. Հանգստյան գոտի..... | 7 |
| Ծրագիր 6. Համայնքային կենտրոն..... | 8 |
| Ծրագիր 7. Ճանապարհների լուսավորում..... | 8 |
| Ծրագիր 8. Գյուղատնտեսական նշանակության տեխնիկայի ձեռքբերում..... | 8 |
| Ծրագիր 9. Բերքատու այգի..... | 9 |
| Ծրագիր 10. Մանկապարտեզի շենքի կառուցում..... | 9 |
| Ծրագիր 11. Աղբահանություն..... | 9 |
| Ազնվածոր համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները..... | 10 |
| Ազնվածորի գյուղապետարանի հաստիքացուցակ..... | 11 |
| Ազնվածոր համայնքի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում..... | 12 |
| Ազնվածորի գյուղապետարանի աշխատակազմ..... | 13 |

Ազնվածորհամայնքի 2013 – 2016թթ. քառամյա ծրագիր

1. Համայնքի իրավիճակի գնահատում

Լոռու մարզի Ազնվածոր համայնքը գտնվում է Հայաստանի հանրապետության հյուսիսային, իսկ Լոռու մարզի հարավային մասում՝ Բազումի լեռնաշղթայի հարավահայաց լանջին: Գյուղը գտնվում է մրացարձակ բարձրության վրա՝

լեռնանտառային և լեռնամարգագետնային ենթազոտում: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը տատանվում է 600 – 700 մմ սահմաններում: Տարվա եղանակներից լավ է աշունը, երբեմն ցրտաշունչ է ձմեռը՝ ուժեղ քամիներով: Գարունը ուշացած է գալիս, մեծամասամբ ցրտահարություններով, ամռանը հաճախակի լինում են կարկտահարություններ, հատկապես հունիս – հուլիս ամիսներին:

Ազնվածոր համայնքը մարզկենտրոնից գտնվում է 15 կմ., մայրաքաղաքից՝ 120 կմ հեռավորության վրա: Մոտ է գտնվում նաև Վանաձոր – Ստեփանավան ավտոճանապարհին՝ 1,5 կմ:

2. Ժողովրդագրություն

Ազնվածոր համայնքի բնակչությունը 01.01.2013թ. դրությամբ կազմում է 561 մարդ, որից 274-ը՝ տղամարդ, 287-ը՝ կին:

Հաշվառված են 492 մարդ՝ 238 տղամարդ, 254 կին, որից մշտապես ներկայիս 365 մարդ: Ժամանակավոր բացակա՝ 29 մարդ:

Բարձրագույն կրթություն ունեն 33 մարդ, միջնակարգ մասնագիտական՝ 22 մարդ:

Թոշակառուներ են 84 մարդ, որից հաշմանդանության թոշակառուներ են 27 մարդ:

Նպաստառու են 29 ընտանիք, զոհված իրնտանիք է՝ 1 - ը:

Ժամանակավոր կացարաններում ապրում են 5 ընտանիք:

Աշխատունակ են առկա բնակչության թվաքանակից 256

մարդ: Զբաղվածություն չունեն առկա աշխատունակ բնակչության թվաքանակից 119 մարդ:

Ծխերի թիվը կազմում է 248 ընտանիք, առ 01.01.2013թ. առկա է 138 ընտանիք:

Տարեկան դպրոց են հաճախում միջին հաշվով 60-70 աշակերտ, նախադպրոցական են 25-30 երեխա:

Համայնքում ծնվում են տարեկան միջին հաշվով 8-10 երեխա:

3. Համայնքի զարգացման գերակա ուղղությունները

Համայնքի գերակա խնդիրն է՝ Ազնվածոր համայնքում ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կնպաստեն Ազնվածոր համայնքի ներդաշնակ զարգացմանը:

Համայնքի հավասարաչափ զարգացումը պետության զարգացման գրավականն է: Համայնքը իր մեջ պետք է ներառի այն բոլոր տարրերը, որոնք հատուկ են այս օրվա քաղաքակրթությանը:

Ժամանակակից պայմաններ ապահովելու դեպքում միայն հնարավոր է խթանել համայնքի բնակիչների քանակական աճը:

Համայնքի գերակա խնդիրներն են՝

1. Գազաֆիկացում,
2. Ջրամատակարարում,
3. Ճանապարհների բարեկարգում,
4. Բուժկետ՝ ժամանակակից, համապատասխան սարքավորումներով,
5. Հանգստյան գոտի, ժամանցի վայր,
6. Համայնքային կենտրոն,
7. Ճանապարհների լուսավորում,
8. Գյուղատնտեսական նշանակության տեխնիկայի ձեռքբերում,
9. Ծառատունկ (բերքատու ծառերով)՝ այգի ստեղծելու նպատակով,
10. Մանկապարտեզի շենքի կառուցում
11. Աղբահանություն:

ՏԻՄ

09.09.2012թ. համայնքի ղեկավար էրնտրվել Նարեկ Արմենի Հովսեփյանը: Նորընտիր ղեկավարի նպատակն է զարգացնել համայնքը և ապահովել ժամանակակից պայմաններ: Խնդիր է դրված ստեղծել այնպիսի հնարավորություններ, որոնք հնարավոր կդարձնեն համայնքի ինքնուրույն զարգացումը:

Գազաֆիկացումը, ջրամատակարարումը, ասֆալտապատումը, ժամանցի վայրերը, գյուղատնտեսության խթանումը և այլն այն անհրաժեշտ գործոններն են, որոնք ստեղծում են բնակչության համար անհրաժեշտ և հարմար պայմաններ: Վերը նշված պայմանների բացակայությունը ստիպում է մարդկանց հեռանալ տվյալ բնակավայրերից և բնակություն հաստատել այլ՝ պայմաններով ապահովված քաղաքային բնակավայրերում: Այս հանգամանքը կարող է առաջացնել պետական մասշտաբով խնդիր:

Համայնքի ավագանին բաղկացած է 5 անձից: Համայնքի ղեկավարի աշխատակազմում աշխատում է 7 աշխատող:

Համայնքն ունի նորակառույց միջնակարգ դպրոց, որեղ սովորում են 55 աշակերտ և աշխատում են 17 ուսուցիչ: Համայնքն ունի տնակներից կազմված մանկապարտեզ՝ որոշակի գույքով: Մանկապարտեզը չի գործում ֆինանսական միջոցների բացակայության և շահագործելու համար արդեն անպիտան տնակների պատճառով:

Համայնքում գործում է 1 բուժկետ՝ տնակային պայմաններում: Բուժկետի սպասարկումը գտնվում է ցածր մակարդակի վրա:

Համայնքի բնակֆոնդը կազմում է 21040մ²:

Բնակիչների առանձնատների 60 – 70%-ը գտնվում է վթարային վիճակում:

Համայնքի հողային տարածքը կազմում է 1440,92հա, որից ` 62,57 հա վարելահող, 254 հա խոտհարք, 866 հա արոտ, տնամերձ` 44 հա, անտառ` 121 հա:

Բնակչության 25 – 30 %-ը զբաղվում է գյուղատնտեսությամբ: Համայնքում տարեկան պահվում է 250 – 300 գլուխ խոշոր եղջերավոր և 250 գլուխ մանր եղջերավոր անասուններ:

Գյուղատնտեսական մթերքները իրացվում են հիմնականում Վանաձոր քաղաքում:

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի Ֆիզիկական վիճակը

Համայնքի սեփականություն համարվող գույքը հետևյալն է`

1. Գյուղապետարանի շենք` կառուցված 1963թ., վթարային է, կավերանորոգման անհրաժեշտություն:
2. Ակումբի շենք` կառուցված 1989 թ., մետաղյա շրջանակներից, ենթակա է հիմնովին վերանորոգման:
3. Մանկապարտեզ հանդիսացող փայտյա տնակներ, ենթակա չէ վերանորոգման, ենթակա է քայքայման:
4. Բուժկետ ծառայող տնակը ենթակա է օտարման:
5. Ջրագիծ` 1,5 կմ երկարությամբ, ենթակա է վերանորոգման:

Համայնքի ուժեղ կողմերը

1. Համայնքի համար առավելություն է հանդիսանում այն, որ նա գտնվում է Վանաձոր-Ստեփանավան ճանապարհի վրա, և Վանաձորից հեռու է ընդամենը 15 կմ:
2. Համայնքն ունի ընդարձակ վելու, զարգանալու ներուժ:
3. Համայնքը ունի նորակառույց դպրոց:
4. Հեռախոսաֆիկացված է:
5. Ունի ջրային բավարար պաշարներ:
6. Համայնքը ունի անասնապահությունը զարգացնելու հնարավորություն:

Համայնքի թույլ կողմերը

1. Համայնքի առանձնատների 60 – 70%-ը գտնվում է վթարային վիճակում:
2. Միջհամայնքային ճանապարհների անբավարար վիճակը:
3. Ոռոգման ցանցի բացակայությունը:
4. Ջրագծի ներքին ցանցի բացակայությունը:
5. Համայնքը զագաֆիկացված չէ:

6. Ժամանակակից կենցաղային պայմանների բացակայությունը:
7. Աշխատատեղերի բացակայությունը:

Համայնքի հիմնական վտանգ սպառնացող գործոնները

1. Արտագաղթը
2. Վթարային առանձնատների առկայությունը
3. Կենցաղային պայմանների բացակայությունը
4. Սեփական եկամուտների անբավարար վիճակը
5. Ինքնուրույն զարգանալու անհնարինությունը
6. Բնական աղետները:

Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները

– Անհրաժեշտ է համայնքում ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կլիթանեն բնակիչներին ապրել այդ համայնքում:

– Կարիք կա ձեռք բերել այնպիսի միջոցներ, որոնք կնպաստեն համայնքի ինքնուրույն զարգացմանը:

– Ստեղծել պայմաններ, որոնք կլիսրախուսեն բնակիչներին զբաղվել գյուղատնտեսությամբ:

– Ստեղծել արտադրական նշանակության օբյեկտներ:

Առաջիկա չորս տարիների նպատակները՝

1. Համայնքի գազաֆիկացում,
2. Ջրամատակարարում,
3. Ճանապարհների բարեկարգում, ասֆալտապատում,
4. Բուժկետի կառուցում,
5. Հանգստյան գոտու ստեղծում,
6. Համայնքային կենտրոնի կառուցում,
7. Ճանապարհների լուսավորում,
8. Գյուղատնտեսական նշանակության տեխնիկայի ձեռքբերում,
9. Մանկապարտեզի շենքի կառուցում,
10. Աղբահանության կազմակերպում,
11. Բերքատու այգու ստեղծում,
12. Սեյսմիկոդի սկիզբնական միջոցառումների ծրագրի իրականացում,

- 13. Նախատեսել 200.000 դրամ՝ համայնքի սեյսմիկ քարտեզագրության համար,
- 14. Նախատեսել համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի օտարում,
- 15. Նախատեսել մանկապարտեզ ծառայած տնակների օտարում:

Համայնքի հեռանկարային նպատակների առաջադրում և առաջնահերթ խնդիրների ձևակերպում

Ծրագիր 1.

Համայնքի գազաֆիկացում.

Նպատակ՝ Բարելավել համայնքի բնակչության կենցաղային պայմանները:

Խնդիր 1. Մինչև 2013թ.-ի հունիսամիսը ձեռք բերել մարզպետարանի միջնորդությունը՝ համայնքի գազաֆիկացման աշխատանքները կազմակերպելու համար:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար

Խնդիր 2. Մինչև 2013թ. սեպտեմբեր ունենալ գազաֆիկացման համար անհրաժեշտ փաստաթղթեր: Ծրագրի արժեքը կազմում է 90 -100 մլն դրամ: Համայնքը կարող է կատարել 10 % -ի չափով ներդրում: Շահառուների թիվը կկազմի 500 մարդ:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար

Ծրագիր 2.

Ջրամատակարարում, ջրագծի ներքին ցանցի կառուցում.

Նպատակ՝ Համայնքի 50 – 60 ընտանիքի ապահովել լիամեկուջրով:

Խնդիր *1.* Մինչև 2013թ.-

ի ապրիլամիսը կազմակերպել ջրագծի վերանորոգման աշխատանքները՝ համայնքի բնակիչների օգնությամբ: Աշխատանքները կարժենան 800.000-ից 1.000.000 դրամ: Համայնքը կներդնի ամբողջությամբ:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար

Խնդիր 2. Մինչև 2013թ.-ի ապրիլամիսը կազմակերպել ջրագծի ներքին ցանցի կառուցման աշխատանքները, որի արժեքը կկազմի 5 -6 մլն դրամ: Համայնքը կներդնի 30 %-ը:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար

Ծրագիր 3.

Ճանապարհների բարեկարգում, ասֆալտապատում

Նպատակ՝ Տրանսպորտային միջոցների երթևեկությունը դարձնել հնարավոր, հարմար և անվտանգ:

Խնդիր 1. Մինչև 2013թ. –ի սեպտեմբեր ամիսը գտնել այնպիսի կազմակերպություններ, որոնք կաջակցեն ծրագրի իրականացմանը: Շահառուների թիվը կկազմի 600 մարդ:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար

Խնդիր 2. Ասֆալտապատման ենթակա ճանապարհը 1,7 կմ է, միջհամայնքային վերանորոգման ենթակա ճանապարհները՝ 2,5 – 3 կմ: Ծրագրի արժեքը 40 -95 մլն դրամ: Համայնքի ներդրումը՝ 20%:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար

Ծրագիր 4.

Բուժկետի կառուցում

Նպատակ՝ Բարելավել համայնքի բուժսպասարկումը:

Խնդիր 1. Գյուղապետարանին կից կիսակառույց մասը վերանորոգել՝ պատրաստելով այն որպես բուժկետ: Խնդիրն է մինչև 2014թ. -ի մայիս ամիսը կազմակերպել աշխատանքները, որի արժեքն է 5 – 6 մլն դրամ: Համայնքի ներդրումը կլինի 30%:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար

Ծրագիր 5.

Հանգստյան գոտի

Նպատակ՝ Ստեղծել ժամանցի վայր՝ բնակիչների համար:

Խնդիր 1. Նախատեսել համապատասխան տարածք, մինչև 2013թ. –ի հունիս ամիսը: Ծրագրի արժեքը 5 - 7 մլն դրամ:

Խնդիր 2. Կազմակերպել Հկ –ի միջոցով , որպես ֆինանսական աջակցություն ունենալով համայնքի 10% ներդրումը: Շահառուների թիվը կլինի 550 մարդ:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար

Ծրագիր 6.

Համայնքային կենտրոն

Նպատակ՝ Ստեղծել մշակութային արժեքներ համայնքում:

Խնդիր 1. Մինչև 2014թ.-ի սկիզբը մարզպետարանի միջնորդությամբ՝ կառավարության ծրագրով համայնքի 10% ներդրմամբ կազմակերպել համայնքի կենտրոնի կառուցումը: Շահառուների թիվը 350 - 450 մարդ:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար

Ծրագիր 7.

Ճանապարհների լուսավորում

Նպատակ՝ Լուսավորել համայնքային ճանապարհները:

Խնդիր 1. Համայնքի 5 փողոցները մինչև 2016թ.-ը լուսաֆիկացնել: Կազմակերպել աշխատանքները 2013թ.-ի սկզբից: Ծրագրի արժեքը 5 – 6 մլն դրամ: Համայնքի ներդրումը՝ 100 %:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար

Ծրագիր 8.

Գյուղատնտեսական նշանակության տեխնիկայի ձեռքբերում

Նպատակ՝ Շահագրգռել բնակչությանը, որպեսզի զբաղվեն գյուղատնտեսական աշխատանքներով և ավելացնել համայնքի սեփական եկամուտները:

Խնդիր 1. 2013թ.-ից սկսած մինչև 2016թ.-ը սեփական միջոցներով և այլ ներդրումների միջոցով ձեռք բերել գյուղատնտեսական նշանակության տեխնիկական միջոցներ: Շահառուների թիվը 200 - 250 մարդ: Ծրագրի արժեքը 30 – 35 մլն դրամ:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար

Ծրագիր 9.

Բերքատու այգի

Նպատակ՝ Բնապահպանական նշանակություն

Խնդիր 1. Մինչև 2016թ.-ը հատկացնել համապատասխան վայր և կազմակերպել ծառատունկ՝ օգնությամբ << Հայ անտառ>>-ի: Համայնքի ներդրումը՝ 50 %:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար

Ծրագիր 10.

Մանկապարտեզի շենքի կառուցում

Նպատակ՝ Նախադպրոցական տարիքի երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում:

Խնդիր 1. Համայնքի տնակային պայմաններում գտնվող մանկապարտեզը օտարել և առաջացած գումարը որպես 10% ներդրում ունենալ մանկապարտեզի նոր շենքի կառուցման գործում:

Խնդիր 2. Ծրագիրն արժանացնել մարզպետարանի հավանությանը՝ 2016թ.-ին: Շահառուների թիվը կլինի 50, արժեքը՝ 30-35 մլն դրամ:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար:

Ծրագիր 11.

Աղբահանություն

Նպատակ՝ Համայնքի տարածքը պահել սանիտարահիգիենիկ նորմերի շրջանում:

Խնդիր 1. Մարզպետարանի հետ համապատասխան ծրագրի շրջանակում: 2013թ.-ից սկսած կազմակերպել աղբահանության աշխատանքները:

Պատասխանատու՝ համայնքի ղեկավար

**Ազնվածորհամայնքի զարգացման
քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները**

| N ը/կ | Անվանումը | Չափի միավորը | 2012 | 2013 | 2014 | 2015 | 2016 |
|----------|-------------------------|-----------------|--------|------|------|------|------|
| 1. | Վարչական տարածք | հա | 1440.9 | | | | |
| 2. | Սեփականաշնորհված հողեր | հա | 171 | | | | |
| | որից՝ տնամերձ | հա | 44 | | | | |
| | վարելահող | հա | 32 | | | | |
| | խոտհարք | հա | 95 | | | | |
| 3. | Պահուստային հողեր | հա | 1062 | | | | |
| | որից՝ վարելահող | հա | 31 | | | | |
| | խոտհարք | հա | 158 | | | | |
| 4. | արոտ | հա | 866 | | | | |
| 5. | այգի | հա | 7 | | | | |
| 6. | Ընտանիքների թիվը | ընտանիք | 178 | | | | |
| 7. | Բնակչության թիվը | մարդ | 653 | | | | |
| 8. | Ծնունդ | երեխա | 11 | | | | |
| 9. | Մահացություն | մարդ | 5 | | | | |
| 10. | Ներհամայնքային ճանապարհ | կմ | 3,5 | | | | |
| 11. | Միջհամայնքային ճանապարհ | կմ | 1,7 | | | | |
| 12. | Չբարեկարգված ճանապարհ | կմ | 3,5 | | | | |
| 13. | Բնակարանի կարիքավոր | ընտանիք | 11 | | | | |
| 14. | Ուսուցիչների թիվը | մարդ | 17 | | | | |
| 15. | Աշակերտների թիվը | աշակերտ | 61 | | | | |

Ազնվածորի գյուղապետարանի
հաստիքացուցակ

| <i>ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ</i> | <i>ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ</i> |
|-------------------------------------------------|---------------------------|
| <i>Համայնքի ղեկավար</i> | <i>1</i> |
| <i>Համայնքի ղեկավարի տեղակալ</i> | <i>1</i> |
| <i>Աշխատակազմի քարտուղար</i> | <i>1</i> |
| <i>Աշխատակազմի առաջատար մասնագետ – հաշվապահ</i> | <i>1</i> |
| <i>Աշխատակազմի առաջատար մասնագետ</i> | <i>1</i> |
| <i>Աշխատակազմի 1– ին կարգի մասնագետ</i> | <i>1</i> |
| <i>Տեխ. սպասարկման անձնակազմ</i> | |
| <i>Հավաքարար</i> | <i>1</i> |

Ազնվածոր համայնքի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում

Չափման միավորը՝ հազար դրամ

| | 2013թ. | 2014թ. | 2015թ. | 2016թ. |
|----------------------------------------|--------|--------|--------|---------|
| Ընդամենը | 8084.4 | 7124.0 | 7808.0 | 8708.0 |
| Հողի հարկ | 1931.0 | 930.0 | 930.0 | 930.0 |
| Գույքահարկ | 226.6 | 316.0 | 350.0 | 450.0 |
| Պահուստային հողերի հարկ /վարձավճար/ | 458.2 | 700.0 | 700.0 | 800.0 |
| Տուրքեր | 28.0 | 28.0 | 28.0 | 28.0 |
| Ոչ հարկային եկամուտ | - | - | - | - |
| Տարեսկզբի ազատ մնացորդներ | - | - | - | - |
| Դոտացիա | - | - | - | - |
| Դոտացիա պետ. բյուջեից | 4579.9 | 4600.0 | 5000.0 | 5200.0 |
| Այլ աղբյուրներից ստացված | - | - | - | - |
| Պատվիրակված լիազոր. | - | - | - | - |
| Ֆոնդային բյուջե | 860.7 | 250.0 | 600.0 | 1.000.0 |
| Հողի օտարում | - | 300.0 | 200.0 | 300.0 |

Ազնվածորի գյուղապետարանի աշխատակազմ

Համայնքի ղեկավար

Համայնքի ղեկավարի
տեղակալ

Տեխ. աշխատող

Գյուղապետարանի
աշխատակազմի
քարտուղար

Գյուղապետարանի
աշխատակազմի
առաջատար մասնագետ-
հաշվապահ

Գյուղապետարանի
աշխատակազմի
առաջատար մասնագետ

Գյուղապետարանի
աշխատակազմի առաջին
կարգի մասնագետ